ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 76

Շ. ԱՎԱԳՅԱՆ

ՍԵՐՄԻ ՁՏՈՒՄՆ
ԿԻ
ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1930

№ 76 ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 76

Շ. ԱՎԱԳՅԱՆ

ՍԵՐՄԻ ՁՏՈՒՄՆ
=ՈՒ=
ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1930

Հրատարակչ. № 1221.

Գրատեպ. № 4008(բ) Պատվեր № 251 Տիրաժ 5000

Պետհրատի Ցերկրորդ Տպարան Ցերևանում.

ՍԵՐՄԻ ԶՏՈՒՄՆ ՈՒ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բարձր բերք ստանալու համար անհրաժեշտ է լավ և մաքուր սերմ ցանել։ «Ինչ վոր ցանես, են էլ կհնձես», ասում է ժողովրդական առածը։ Եթե ցանում ես լավ. առողջ, մաքուր սերմ, ուրեմն կստանաս նույն տեսակի և վորակի առատ բերք, և ընդհակառակը՝ եթե ցանում ես վատառողջ, նվազ, կեղտոտ սերմ—կստանաս նույն տեսակի նվազ բերք։

Այս ճշմարտությունը բոլորին հայտնի է, բայց, չնայած դրան, դեռ կան շատ գյուղացիներ, վորոնք մինչև որս էլ լավ բերք ստանալը վերագրում են զերբնական ուժերին՝ աստծուն։ Ասում են, թե ինչ կարիք կա շարքացան անել, հողը պարարտացնել, ընտիր սերմեր ցանել և սերմերը զտել և այլ միջոցների դիմել, քանի վոր շատ կամ քիչ բերք ստանալը կախված է մարդու բախտից։

Վորպեսզի մեզ համար միանգամայն և ընդմիշտ պարզ լինի, վոր բարձր բերք ստանալը կախված է մեզանից, մեր ցանկությունից, մեր շնորհքից և վոչ թե գոյություն ունեցող ինչ-վոր

ուժերից, մենք այստեղ ծանոթանանք բերքի բարձրացման միջոցներից մեկին՝ սերմի գտման ու նրա նշանակությանը։

Հայտնի է, որ ամեն մի բույս սնվում է, շնչում, աճում, բազմանում և մեռնում է, ճիշտ այնպես, ինչպես մնացած կենդանիները։ Բույսի զարգացման վրա ազդում են շատ պայմաններ՝ հողի տեսակը, խոնավությունը, տաքությունը, լույսը և այլն։ Փոփոխելով բույսի զարգացման համար անհրաժեշտ այս պայմանները, մենք կարող ենք նրա աճումն ուժեղացնել և կամ նվազեցնել։

Մութ տեղի բույսը լինում է դեղնած, ցուրտ տեղինը՝ գետնին փռված. աղի հողերի մեջ բույսը չի աճում և ընդհակառակը՝ լավ, լույս, բավարար խոնավություն ու տաքություն ստացող բույսն աճում և փարթամանում է։

Սակայն, ինչպիսի լավ պայմաններ էլ ստեղծենք բույսի զարգացման համար, յեթե նրա սերմը (որից նա աճել է) վատ է, անառողջ, մենք առողջ բույս չենք ստանա, մեր բերքը միշտ պակաս կլինի, և մեր արած ծախսերն իզուր կանցնեն։

Այդ հասկանալու համար անհրաժեշտ է ծանոթանալ սերմի կազմությանը։

Ցուրաքանչյուր սերմ իրանից ներկայացնում է մի ամբողջ բույս՝ իր արմատներով, ցողունով ու տերևներով։ Սակայն բույսի այդ բոլոր մասերը սերմի մեջ շատ փոքր են և նման չեն հասունացած բույսի մասերին։ Սերմի մեջ գտնվում է իսկական բույսի սաղմը։ Վորպեսզի սերմից բույս ստացվի, անհրաժեշտ է, որ նրա սաղմի բոլոր մասերը զարգանան, մեծանան և իրենց արտաքին տեսքը փոխեն։

Այդ բանում համոզվելու համար վերցնենք մի վորևե սերմ, որինակ՝ ցորենի սերմ, և կըտրենք այդ սերմը յերկարությամբ. կտեսնենք, որ սերմը դրսից ծածկված է կարծր պատյանով, պատյանի ներսում գտնվում է սպիտակ մի նյութ, իսկ այդ նյութի ստորին մասում՝ մի փոքրիկ կետ։ Այդ կետը բույսի սաղմն է։ Նա կազմված է տերևներից, ցողունից և արմատից։

Չնայած նրան, որ սերմի մեջ գտնվող սաղմը շատ նուրբ է ու քնքուշ, քան մեծ բույսը, բայց նա, այնուամենայնիվ, բավական դիմացկուն է, յեթե միայն նա խոնավ տեղ չի ընկած։ Զոր սերմերը մենք կարող ենք բավական տաքացնել, ցուրտ տեղերում պահել, և դրանից սաղմը չի մեռնի։ Տաքության և ցրտի այսպիսի փոփոխության մեծ, զարգացած բույսերը չեն դիմանում և մեռնում են։

Սերմի մեջ գտնված սաղմն սկսում է զար-

գանալ և աճել այն ժամանակ, յերբ նրան տալիս ենք խոնավություն, տաքություն և ոդ։ Այդ բոլորը սերմն ստանում է հողի մեջ։ Հողի մեջ ծլած և դեռ արևի յերես չտեսած սերմի սաղմն իր քաշով միշտ ավելի պակաս է, քան ինքը սերմը։ Վորքան սաղմն աճում, մեծանում է, այնքան նվազում է սերմը։

Դրա պատճառն այն է, վոր սաղմը, մինչև հողի յերես դուրս գալը, իր սնունդը վերցնում է սերմի սպիտակուցային մասից։ Սպիտակուցային մասն իր մեջ գտնված սնունդն աստիճանաբար տալով սաղմին՝ հետզհետե նվազում է, հալվում, և յերբ սաղմը դուրս է գալիս հողի յերեսը և կանաչ գույն ստանում, նա կամ մեռնում է և կամ ինքն էլ կանաչ գույն ստանալով շարունակում է ոգնել մատաղ բույսին՝ հողից սնունդ վերցնելու։

Շատ հաճախ սերմերն այնքան նվազ են լինում ու այնքան քիչ սննդանյութ ունենում իրենց մեջ, վոր չեն կարողանում սաղմին կերակրել մինչև նրա՝ հողի յերես դուրս գալը և արև տեսնելը, վորպեսզի կանաչի ու տերևակալի։ Այդպիսի սաղմերը կամ մնում են հողի մեջ ու վոչնչանում, և կամ շատ ուշ են դուրս գալիս, լավ չեն աճում, թփակալում, ուշ են հասնում ու քիչ բերք տալիս։

Սրանից հետևում է, վոր նախքան ցանք կատարելը անհրաժեշտ է իմանալ, թե մեր ցանած սերմերն ինչ չափով սննդի պաշար ունեն։

Ի՞նչպես իմանալ այդ։

Մենք ասացինք, վոր սերմի սպիտակ միջուկը սննդի պաշար է սաղմի համար։ Վորքան շատ լինի սպիտակ մասը, այնքան էլ սաղմը սննդով շատ ապահովված կլինի, և վորքան շատ լինի սպիտակ մասը, այնքան խոշոր կլինեն սերմերը։

Ուրեմն, ցանք անելիս մենք պիտի աշխատենք խոշոր սերմեր ցանել։

Փորձերը ցույց են տվել, վոր շատ խոշոր սերմեր ցանելն այնքան էլ լավ չէ։ Լավ է ցանել միջակ մեծության սերմեր։

Բայց այդքանը դեռ բավական չէ, վորպեսզի մենք համոզվենք, թե մեր սերմերը լավորակ են։

Շատ հաճախ խոշոր սերմերն իրենց մեջ ավելի քիչ սնունդ են պարունակում, քան փոքրերը։ Դրա պատճառն այն է, վոր սերմերի միջուկին զնատած են լինում զանազան միջատներ, և կամ նրանք ուղղակի փուչ են լինում։ Անհրաժեշտ է, վոր մեր ցանելիք սերմերը խոշորության հետ նաև ծանրություն էլ ունենան։ Այդպիսով, սերմացուն ընտրելիս պիտի նկատի ունենալ նաև ծանրությունը։

Բացի այդ, հայտնի չէ նաև, վոր սերմացուն կամ հացահատիկը հավաքելիս նրա հետ խառն են լինում քարի, հողի, փայտի կտորներ և այլն։ Հայտնի չէ նույնպես, վոր ցանելիս անհրաժեշտ է վորոշել, թե մեկ հեկտարին ինչքան սերմ պիտի վերցնել։

Եթե շատ սերմ ցանենք, ցանքը խիտ կլինի, աճող բույսերն իրար կճնշեն, չեն թափանցի, բավարար չափով լույս չեն ստանա, կպառկեն, և հատիկներն էլ կլինեն նվազ ու մանր։ Նոսր ցանելու դեպքում հողը պարապ կմնա, և մեր արած ծախսերը չեն արդարանա։

Իսկ վորպեսզի իմանանք, թե ինչքան սերմ ենք ցանելու, ապա պիտի իմանանք նաև, թե մեր սերմացուն վորքան մաքուր է քարից, հողից և այլ նյութերից։

Եթե մեկ հեկտարին սովորաբար ցանում ենք 12 փութ ցորեն (շաղացան), և մեր սերմացուի կեսը քար է ու թեփ, ապա փաստորեն մենք ցանած կլինենք վեց փութ։ Իսկ յեթե մեր սերմը շատ մանր է, այդ դեպքում փթի կամ կոտի հաշվով ցանելիս՝ մեր ցանքը շատ խիտ կլինի։

Ուրեմն, պարզ է, վոր սերմացուն պիտի մաքրել այդ ավելորդ մասնիկներից։

Սերմի մեջ յեղած քարը, փայտը և այլ նյութերն այնքան վնաս չեն տալիս ցանքին,

վորքան սերմացուի մեջ գտնված վայրի բույսերի—մոլախոտերի սերմերը։ Այս սերմերն ընկնելով մշակած հողի մեջ՝ ավելի արագ են աճում ու խեղդում են մեր ցանած կուլտուրական բույսին։

Բացի նրանից, վոր դրանք անմիջապես վնասում են կուլտուրական բույսերին, միաժամանակ տարածում են զանազան հիվանդություններ, վորոնք շատ մեծ չափերով պակասեցնում են բերքը։

Մոլախոտերի սերմերից կուլտուրական բույսերի սերմացուն մաքրելը բերքի բարձրացման ամենաանհրաժեշտ պայմաններից մեկն է։

Այսպիսով, սերմացուն նախքան արտ տանելը պիտի լավ ընտրել և զտել, պիտի ընտրել խոշորներն ու ծանրերը, զտել ավելորդ նյութերից և մոլախոտերի սերմերից։

Սակայն, նախքան այդ աշխատանքը կատարելը, անհրաժեշտ է վորոշել, թե մեր սերմերը ծլելու ընդունակություն ունեն, թե վոչ։

Մեղանում շատ հաճախ սերմացուն հորում են գետնի մեջ և կամ պահում շտեմարաններում։ Եթե սերմի տեղը խոնավ է, յեղանակը տաքանալիս նրա սաղմն սկսում է անժամանակ զարգանալ, իսկ ցրտելիս նա շատ շուտով փչանում է, մեռնում։

Հին, միքանի տարվա սերմերը կամաց-կամաց սկսում են մեռնել և ծլելու ընդունակությունը կորցնել, այդ պատճառով հին սերմերը վորպես սերմացու գործադրելն անթույլատրելի չե։

Լավ, առողջ սերմերը յուրահատուկ գույն ու հոտ են ունենում, վորն ամեն մի գյուղացու լավ հայտնի չե։

Սովորաբար սերմերն իրենց ծլելու ընդունակությունը պահպանում են մինչև չերեք տարի, բայց կան նաև այնպիսի սերմեր, վորոնց սերմերը մինչև հինգ տարի կարելի չե պահել (օրինակ՝ սիսեռը)։

Տարեկանի, գարու, վարսակի, կորեկի, կորընդանի և առվույտի սերմերը կարելի չե պահել վոչ ավելի, քան չերկու տարի, վորից հետո նրանք կորցնում են իրենց ծլելու ընդունակությունը։

Ցեթե կասկած կա, վոր սերմերը հին են ու փչացած, պետք է նրանց փորձել։ Դրա համար վերցնում են 100 հատ սերմ և շարում չերկու խոնավ շորի արանք ու դնում տաք տեղ։ Լավ կլինի պահել տաք բնակարանում։ Ցերկու-չերեք որից հետո սերմերը ծլում են, և կարելի կլինի հաշվել պիտանի սերմերի քանակը։ Ցեթե փորձի համար վերցրած 100 սերմից 50 հատն է ծլել, կնշանակի մեր սերմացուի միայն կեսն է պիտանի, չեթե 25 է ծլել—կնշանակի $^1/_4$ մասն է պիտանի և այլն։

Ծլելու այդպիսի ընդունակություն ունեցող սերմացուն չի կարելի ցանել։

Սակայն, ինչպես և ինչով սերմերը զտել, ընտրել, վորպեսզի նա լինի խոշոր, ծանր, լիքը և միևնույն ժամանակ մաքուր մոլախոտերի սերմերից ու այլ նյութերից։

Պարզ է, վոր սերմացուն ձեռքով, մեկ-մեկ ընտրել չի լինի. դա շատ աշխատանք կպահանջի։ Մեր գյուղացիները սերմեր զտելու համար գործ են ածում զանազան մեծություն ունեցող մաղեր։ Բայց այդ մաղերը լրիվ չափով չեն զբաղեցնում սերմերը։ Սերմերը չեն ընտրվում ըստ մեծության ու ծանրության, և նրանց մեջ չեղած քարերն ու այլ նյութերը և մոլախոտերի սերմերը չեն հեռացվում։

Սերմերն ընտրելու և զտելու համար կան զանազան տեսակի մեքենաներ, վորոնք սերմացուն թե վորակով և թե քանակով լավ են զտում։

ՍԵՐՄՆԵՐԻ ՁԵՌՈՒՄՆ ԸՍՏ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ

Մեզանում սերմերն ըստ ծանրության զտելու մեքենաներ քիչ կան։ Ուրիշ չերկրներում

սերմերն ըստ ծանրության զտելու համար զանազան մեքենաներ ավելի շատ կան, նույնիսկ յուրաքանչյուր տեսակի սերմ իր հատուկ մեքենան ունի։ Այդ մեքենաները սերմն ըստ ծանրության դեռ այնքան լրիվ չեն զատում, բայց, այնուամենայնիվ, վորոշ ոգուտ տալիս են, և դրանից բերքն զգալի չափով բարձրանում է։

Այդ մեքենաներից մեկը քամհար մեքենայի նման է. քամհար մեքենայի թևը պատելուց առաջ է գալիս քամու հոսանք։ Քամու հոսանքը դիպչելով վերից թափվող հատիկներին՝ նրանցից ավելի թեթևներին հեռու յե գցում, իսկ ծանրերին՝ մոտիկ։ Այս ձևով իրարից բաժանվող զանազան ծանրության հատիկները հավաքում են և հեռացնում։

ՍԵՐՄԻ ՉՏՈՒՄՆ ԸՍՏ ՉԵՎԻ ԵՎ ՄԵԾՈՒԹՅԱՆ

Թոշոր սերմերը մանրերից, ինչպես և մոլախոտերի սերմերը մեր ցանելիք հատիկներից զատելու համար կան հատուկ մաղեր, վորոնք ունեն զանազան ձևի և մեծության անցքեր։ Այդ մաղերի վրայով անցնող սերմերն իրարից անջատվում են, նայած իրենց ձևին և մեծության։ Վորովհետև մոլախոտերի սերմերն իրենց ձևով նման չեն հացահատիկի սերմերին, թափվում են

այն մաղերից, վորոնց անցքերը հարմարեցված են նրանց ձևին ու մեծությանը։

Սերմացուն մաքրելով մոլախոտերի սերմերից և այլ ավելորդ նյութերից, հաջորդ մաղերի վրայով անցնելիս բաժանվում է տեսակների — ըստ մեծության։ Այս բոլոր աշխատանքները կատարվում են սերմազատիչ (տրիեր) մեքենայով։ Տրիերը Հայաստանում բավականին տարածված մեքենա է, և մեր բոլոր գյուղացիներն այդ մեքենային ծանոթ են։

Տրիերը մեկ որում կարող է զտել յերկու հարյուր փութ սերմացու։ Տրիերով զտված սերմը ցանելիս փորձերը ցույց են տվել, հացահատիկների բերքը բարձրանում է 10—15%, այսինքն, յեթե մենք մեկ հեկտարից առանց սերմը զտելու, ստանում ենք, միջին հաշվով, հիսուն փութ, զտելուց հետո կստացվի 55-ից մինչև 57 փութ։

Այս գարնանը մենք պետք է ցանենք 238 հազար հեկտար հացահատիկ։ Յեթե մեկ հեկտարից 5 փութ ավելի բերք ստանանք, ապա սերմը հարյուր տոկոսով զտելուց հետո ամբողջ Հայաստանում մենք կստանանք 1.190,000 փութ ավելցուկ։

Ш. Авакян

Чистка семян и ее значение

Госиздат СССР Армении
Эривань—1930